



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակում A-195-20 ծածկագրով իրականացված «Ռեակտիվ էներգիայի (հզորության) կոմպենսատորներ» առաջարկների բաց հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2021

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2020 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2020 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2021 թվականի հունվարի 29-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Ռեակտիվ էներգիայի (հզորության) կոմպենսատորներ» առաջարկների բաց հարցում

Ընկերության 2020 թվականի գնումների պլանի հիման վրա, տնօրենի 2020 թվականի ապրիլի 23-ի №51-Լ հրամանի համաձայն, Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է առաջարկների բաց հարցում ռեակտիվ էներգիայի կոմպենսատորների մատակարարման պայմանագրի կնքման իրավունքով, հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2020 թվականի մայիսի 5-ը, պայմանագրի կատարման ժամկետ՝ պայմանագրի ստորագրման օրվանից 60 օրացուցային օրերի ընթացքում:

Հայտարարությունը Ընկերության կայքում և ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2020 թվականի ապրիլի 28-ին: փաստաթղթերում նշված է որ հայտարարությունը հրապարակվել է ապրիլի 27-ին:

Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:

Մրցույթի հայտարարումից հետո, հայտ են ներկայացրել 2 մասնակից՝ «Բրայթ Այդիաս» և «Ինս Էլեկտրո» ՍՊԸ-ները: Ներկայացված հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են մրցութային պայմաններին բավարարող: Համաձայն գնահատման չափանիշների՝ հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

	Ընկերության անվանում	Ներկայացված գնային առաջարկները, մլն դրամ առանց ԱԱՀ
1	2	3
1	«Ինս Էլեկտրո» ՍՊԸ	20,4
2	«Բրայթ Այդիաս» ՍՊԸ	21,1

Առավել օպտիմալ գնային առաջարկ ստանալու համար մրցութային հանձնաժողովի կողմից որոշվել է անցկացնել վերասակարկություն: Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

	Ընկերության անվանում	Ներկայացված գնային առաջարկները, մլն դրամ առանց ԱԱՀ
1	2	3
1	«Ինս Էլեկտրո» ՍՊԸ	16,4
2	«Բրայթ Այդիաս» ՍՊԸ	21,1

Հաղթող է ճանաչվել ամենացածր գին առաջարկած մասնակիցը՝ «Ինս Էլեկտրո» ՍՊԸ-ն, որի հետ 2020 թվականի օգոստոսի 28-ին կնքվել է պայմանագիր, գինը՝ 19,7 մլն ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ստորագրման օրվանից 60 օրացուցային օրերի ընթացքում: Հետագայում կնքվել է A-195-20 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագիր, որով մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի մարտի 1-ը:

A-195-20 ծածկագրով իրականացված «Ռեակտիվ էներգիայի (հզորության) կոմպենսատորներ» առաջարկների բաց հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
3. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գնման անվանումը «Ռեակտիվ էներգիայի (հզորության) կոմպենսատորներ»

Գնման ծածկագիրը A-195-20

Գնման ձևը առաջարկների բաց հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

Ստուգաթերթի պայման		Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
վերջինիս կողմից լիազորված անձը					
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Հայտարարությունը հրապարակվել է նաև «Հայաստանի հանրապետություն» թերթում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ստուգաթերթի պայման		Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

8	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
13 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
14 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
15	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
16	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Գնման պայմանագիրը կատարման ընթացքում է:
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին: